ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ԵՀ ՀԻՄ

ԸՆՏԱՆԻՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՆ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

1868—1919 թթ. հրատարակված «Արարատ» ամսագիրը նշանակալի դեր է խաղացել հայ ժողովրդի կյանքում։

Ամսագրում տպագրվել են նաեւ ընտանիքի վերաբերյալ նյութեր, որոնցում արծարծվել են հասարակական մեծ հնչեղություն ունեցող հարցեր։ Այսպես, տարբեր ժամանակաշրջաններում կնոջ դրությանն ու կրթությանը հանգամանալից անդրադարձած «Պատմական նկատմունք կնոջ դրութեան եւ կրթութեան մասին» հոդվածում Արիստակես վրդ. Սեդրակյանը գրում է, որ զանազան ժամանակներում այս կամ այն երկրում կնոջ վիճակը պայմանավորված է եղել հենց տվյալ հասարակության մտավոր եւ բարոյական դրությամբ։ Հին՝ հեթանոսական աշխարհի քաղաքակրթությունը հիմնականում չէր ընկալում մարդկային արժանապատվության կարեւորությունը, ուստի կնոջ դրությունը կռապաշտական աշխարհում գոհացուցիչ չէր։ Քանի որ տիրապետող էր բիրտ ուժը, կնոջ համար դժվար էր մաքառել տղամարդկանց հետ, իսկ բարքերի համատարած ապականության պայմաններում կինը կորցնում էր իր արժանավորությունն ու չուներ հարգվելու որեւէ իրավունք։ Մարդկության զարգացման սկզբնական ժամանակներում, երբ կրոնը հիմնված էր ստրկացնող երկյուղի վրա, հասարակական կազմավորումները հենվում էին զորեղի իրավունքի վրա, եւ կինը, չունենալով այդ հիմնական իրավունքը, հարկադրված էր ունենալու նվաստ դեր. տղամարդը նրան վերաբերվում էր իբրեւ առարկայի։ Հետագայում, երբ հասարակությունը պարզ կենդանական վիճակից անցում է կատարում դեպի զարգացման ավելի բարձր աստիճան, կինը՝ իբրեւ մայր եւ տանտիկին, ստանում է վեհագույն նշանակություն։ Տղամարդն սկսում է հարգանք տածել կնոջ հանդեպ։ Դա երեւում է հատկապես ցեղային կամ նահապետական կյանքում[1]*։*

[1] Արիստակես. վրդ. Սեդրակյան, *Պատմական նկատմունք կնոջ դրութեան եւ կրթութեան մասին, «Արարատ», ԺԱ.—ԺԲ., 1878, էջ 425—434։*

Ըստ հոդվածագրի՝ Հոմերոսը մեծ նշանակություն է տալիս կնոջը։ Հենվելով հռոմեացի մատենագիրների տեղեկությունների վրա՝ հոդվածագիրը նշում է, որ գերմանական ցեղերի ու սլավոնների համար կինը մի նվիրական էակ էր, եւ կնոջ կարծիքը մեծ մասամբ կարեւոր նշանակություն ուներ։ Միաժամանակ ցավով նկատում է, որ մեզանում դեռ ոչ ոք հանձն չի առել հետազոտել դիցաբանական եւ հին պատմական շրջանների հայ կնոջ դրությունը։ Այս առումով բացառություն է համարում Ալ. Երիցյանի «Историческое положеніе современной Армянки» *աշխատությունը, թեեւ գրում է, որ այդ աշխատությունը միանգամայն անհամապատասխան է իր վերնագրին։ Նա կարեւորում է ժողովրդական զրույցները, հեքիաթները, ավանդություններն ու երգերը, որոնցից շատերը, ըստ նրա, պարզորոշ ցույց են տալիս հին ժամանակներում հայ կնոջ դրությունն ընտանեկան եւ հասարակական կյանքում։*

Այնուհետեւ հոդվածագիրը նշում է, թե Արեւելքում կնոջ բախտն այնպիսին է մնացել, ինչպիսին որ էր Քրիստոսի ծննդից մի քանի դար առաջ։ Հունաստանում եւ Հռոմում կնոջ նկատմամբ վերաբերմունքը նույնպես անարդար էր։ Պետական կյանքում կինը չի կանգնել եւ չէր կարող կանգնել տղամարդու հետ հավասար. նա չէր համարվում ազատ, լիիրավ քաղաքացի, այլ ծառայական դասի ու ստրուկների հետ ստորին տեսակ էր համարվում։ «Սանձ, աւել եւ բու — ահա խորհրդանշանը կանացի առաքինությունների — լռակացութեան, տնտեսութեան եւ հսկողութեան։ Լինել մարդի բարեկամը կամ զրուցակիցը նա չէր կարող»[2]։ Հռոմում կինն ստրուկ չէր համարվում, այլ մի էակ, որը թեեւ տղամարդուն համահավասար չէր, սակայն ուղղակի եւ մեծ ազդեցություն ուներ ընտանեկան կյանքի ներքին կազմակերպության, հոգու, նույնիսկ՝ հասարակական գործերի ընթացքի վրա։

Այսպիսով՝ ըստ հոդվածագրի՝ հին կռապաշտական աշխարհն իրենից հետո կտակեց կա՛մ կնոջ ստրկություն, որը նրանից խլում էր մարդկային բոլոր իրավունքները, կա՛մ ազատություն բարոյական եղծման ձեւով, որը կործանում էր կնոջ իսկական արժանավորությունն ու ոչնչացնում նրա հանդեպ եղած որեւիցե հարգանք։

Հին կնոջ բոլորովին այլ՝ ինքնագո տեսակ էր ներկայացնում եբրայական ժողովուրդը։ Ս. Գիրքը, նկարագրելով անմեղ մարդու նախասկիզբ

[2] *Անդ, էջ 429։*

վիճակը, ցույց է տալիս նաեւ կնոջ սկզբնական բարձր նշանակությունը եւ ընտանեկան հարաբերությունների մաքուր օրինակը։ Հանցանքն ամբողջությամբ այլափոխեց նախեղակ վիճակը, որի հետեւանքը եղավ մարդու մաքառումը բնության հետ, իսկ կնոջ համար երկունքի ցավեր եւ տղամարդուն ստորադրություն, այսինքն՝ «Առ այր քո դարձ քո, եւ նա տիրեսցէ քեզ» (Ծննդ., Գ. 16.)։ Սակայն կինը, որը, առաջինն օձից խաբվելով, մարդու անկման պատճառ դարձավ, պիտի լինի եւ մարդու վերականգնման պատճառը։ Այսինքն՝ կինն իր մեղքը պիտի քավի՝ ծնելով Նրան, որը պիտի ջախջախի օձի գլուխը։ Այս հանգամանքը կնոջ նկատմամբ հրեաների վերաբերմունքին եւ այդ ժողովրդի մեջ կնոջ ունեցած դրությանը բոլորովին այլ կերպարանք էր տալիս։ Հին Կտակարանում հաճախ կարելի է նկատել մոր վսեմ նշանակությունն ու նրա նկատմամբ խորին հարգանքը, իսկ ամուսնական փոխհարաբերություններում հրեուհին միշտ հպատակ է ամուսնուն։ Այս ամենով հանդերձ՝ նա բավականին ազատ էր՝ արեւելյան ուրիշ ազգերի կամ Հունաստանի կանանց համեմատությամբ։ Հրեա կնոջ կյանքում չենք գտնում այն ճնշվածությունը, որը բնորոշ էր Հին աշխարհի կանանց. նրանք համեմատաբար ավելի նշանակություն ունեին ընտանիքում, թեեւ կատարելապես չունեին մարդկային իրավունքներ եւ արժանավորություն։

Այնուհետեւ հոդվածագիրն անդրադառնում է միջնադարում կնոջ ունեցած դերին, խոսում ազնվազարմ օրիորդների համար բացված դպրոցների մասին, միաժամանակ նշում, որ, այնուամենայնիվ, մինչեւ ԺԹ. դարը տիրապետող էր այն մտայնությունը, թե կինը թույլ եւ քնքուշ արարած է՝ ստեղծված միայն տղամարդու հաճույքի համար։ Սակայն քիչ չէին այն հեղինակները, որոնք կարծում էին, թե պետք է լավ կրթություն տալ կանանց, քանի որ կնոջ վատ կրթությունն ավելի է վնասում հասարակությանը, քան տղամարդունը, որովհետեւ գլխավորապես բարոյական եւ կրոնական գաղափարների կրողը հենց կինն է, եւ հիմնականում հենց նա է զբաղվելու մանուկների դաստիարակությամբ։

Ուսանելի դիտարկումներով աչքի է ընկնում նաեւ Մանուել քհն. Աստուածատրյանցի հոդվածը[3], որտեղ հեղինակն անդրադառնում է նշանադրությանը, պսակին, կուսության խնդրին, ամուսնության տարիքին,

[3] *Տե՛ս* Մանուէլ քհն. Աստուածատրեանց, *Ամուսնութեան դաշանց վերայ, «Արարատ», 1878, Ը.–Թ., էջ 334–342։*

հասության ու չհասության խնդիրներին եւ իր եզրակացությունները հիմնավորում Հին եւ Նոր Կտակարաններից կատարած մեջբերումներով։

Ամուսնության հարցում նշանադրության կարեւորությանն է անդրադառնում նաեւ Վահրամ եպս. Մանկունին[4]։ Հոդվածագիրն իրավամբ շեշտում է, թե քանի որ ամուսնության խորհուրդը քրիստոնեական Եկեղեցում սուրբ եւ անլուծանելի է (բացառությամբ մի քանի ծանրակշիռ հանգամանքների, օրինակ՝ ամուսնական պարտքի կատարման անընդունակությանը, երբ օրենքը կարող է թույլ տալ լուծել պսակը), ամուսինները մինչ ի մահ միմյանց տեր են, օգնական եւ լծակից, եւ միայն մահը կարող է նրանց բաժանել։ Ուստի խորհրդակատար քահանաները պարտավոր են հետամուտ լինել եւ քննել ամուսնացողների՝ չափահասության, հասության, բարոյական եւ առողջապահական անհրաժեշտ հատկությունների հետ կապված խնդիրները, ինչպես նաեւ շատ կարեւոր հանգամանք է ամուսնացողների փոխադարձ ինքնահոժար կամքի առկայությունը։ Այս ամենը ճշտելուց հետո միայն պետք է օրհնվի ամուսնության նվիրական խորհուրդը։ Հեղինակը դատապարտում է շահադիտական նկրտումներով ամուսնությունները եւ նշում դրանց կործանարար հետեւանքները։

Ամուսնության եւ ընտանիքի ամրության վերաբերյալ այժմեական եւ ուսանելի դիտարկումներով աչքի է ընկնում «Արարատ»-ի հաջորդ հրապարակումը[5]։ Իր քարոզը սկսելով Պողոս առաքյալից «Խորհուրդս այս մեծ է» մեջբերմամբ՝ հոդվածագիրը գրում է, թե մեծ է արդարեւ, քանզի սա իր մեջ պարունակում է այն անդրանիկ օրհնությունը, որով Աստված օրհնեց մարդկության նախածնող եդեմական ընտանիքին, ուստի բովանդակում է իր մեջ այն երջանկությունը, որով Աստված հաճեցավ երջանկացնել մարդկությանը։ Սակայն անհրաժեշտ է նկատել եւ այն, թե որքան մեծ է ամուսնության խորհուրդը, նույնքան մեծ եւ կարեւոր են նրա շնորհը վայելել ցանկացող քրիստոնյայի պարտավորությունները, որոնք սրբությամբ կատարողները միայն կստանան աստվածապարգեւ օրհնությունը, երջանկությունն ու սրբարար շնորհը։ Քրիստոնյայի՝ դեպի իր կինն ունեցած գլխավոր պարտավորությունը սերն է։ Այդ անձնազոհ սիրո պայմանով պետք է քրիստոնյան վճռի ընդունել աստվածասահման զուգավորության սուրբ խորհուրդը։ Մարդու սերը

---

[4] *Տե՛ս* Վահրամ եպս. Մանկունի, *Նշանադրութիւն, «Արարատ», 1878, Բ., էջ 41–44։*

[5] *Տե՛ս* Ս. Վարդապետ *(հավանաբար՝ Սահակ վրդ. Բաղդասարեան), Ամուսնութիւն, «Արարատ», 1881, Դ., էջ 145–148։*

դեպի իր կինը պետք է արտահայտվի նրա հեզ եւ քնքուշ կենցաղավարության մեջ։ Մարդը պետք է համոզված լինի, որ իր կինն իրեն ստրուկ չի տրված, այլ հավասար ընկեր, կյանքի քաղցր ու դառը պահերի ուղեկից, ուստի ընտանեկան եւ հասարակական կյանքում պարտավոր է հարգել իր կնոջ իրավունքները, հոգալ նրա բարոյական եւ մարմնական պահանջմունքները, զգուշանա նրա դյուրաբեկ սիրտը դառնացնելուց եւ սերն իրենից պաղեցնելուց։ Քրիստոնյայի համար աններելի հանցանք է սեփական կնոջ նկատմամբ կոպիտ ու վայրենի վերաբերմունք ունենալը, որովհետեւ Աստծու սեղանի եւ քահանայի առաջ ուխտել են սիրել, սիրել այնպես, ինչպես Փրկիչը սիրեց Սուրբ Եկեղեցին։ Իսկ կանայք փոխադարձաբար պարտավոր են ամեն բանի մեջ հնազանդ լինել իրենց ամուսիններին։ Այդ հնազանդությունը պետք է ոչ թե ակամա բխի ստրկական սրտից, այլ իր պարտավորությունները քաջ գիտակցող եւ վեհանձն սրտից, ոչ թե տհաճությամբ, այլ մեծ հոժարությամբ եւ ուրախությամբ։

Ամուսնական փոխադարձ պարտավորությունները կատարելու գլխավոր եւ ապահով միջոցներից առաջինը երկու ամուսինների՝ միմյանց թույլ եւ պակասավոր կողմերին քաղցր ու ներողամիտ զիջողությամբ վերաբերվելն է։ Իսկ երկրորդ միջոցը՝ փոխադարձ հավատարմությունն է։ Աստծու առաջ միմյանց տված փոխադարձ հավատարմության ուխտի մեջ պետք է ցմահ հաստատուն մնալ։

Այնուհետեւ հոգեշնորհ հայր սուրբը եզրակացնում է, թե ընտանիքը, որում թագավորում են ամուսնական փոխադարձ սերն ու հավատարմությունը, երջանկության եդեմ է, որն ընծայում է մարդկությանը պիտանի եւ Աստծուն հաճո բարեկիրթ զավակներ։ Հավերժապես ապահովված է այն ազգի գոյությունը, որը բաղկացած է այսպիսի ընտանիքներից։ Նրանցից են բխում ամբողջ ազգի առաջադիմությունն ու հարստությունը։ Այդպիսի ընտանիքներ ունենալու համար անհրաժեշտ է երիտասարդությանը կրթել ու դաստիարակել ամուսնական փոխադարձ սիրո եւ հավատարմության գաղափարի կարեւորության գիտակցմամբ, որպեսզի կարողանան ամենայն սրբությամբ պաշտել ողջախոհությունն ու սրբությունը[6]։

[6] *Տե՛ս անդ, էջ 148։*

Իր մեկ այլ հոդվածում նույն հեղինակը հանգամանալից անդրադառնում է զավակների հանդեպ ծնողների ունեցած պարտականություններին՝ ծնողներին հորդորելով անհրաժեշտ ուշադրության արժանացնել իրենց զավակների հոգեւոր եւ մարմնական (իմա՛ ֆիզիկական.— Ա. Մ.) դաստիարակության կարեւոր գործը։ Ըստ հոդվածագրի՝ ծնողների նվիրական պարտականությունն է՝ իրենց զավակներին սովորեցնել այն ամենը, ինչը որ սուրբ է, բարի եւ օգտակար, ու հեռու պահել այն ամենից, ինչը որ չար է եւ վնասակար։ Կարեւորելով ընտանիքի եւ դպրոցի դերը մարդու դաստիարակության գործում՝ հեղինակը գերապատվությունը տալիս է ընտանիքին եւ հորդորում, որ ծնողները զավակների ստացած դպրոցական եւ ընտանեկան դաստիարակությունը լրացնեն իրենց անձնական կյանքի օրինակներով[7]։

Ամսագրի հաջորդ հրապարակագիր Մակար եպս. Բարխուդարյանը[8] ընտանեկան խաղաղության մասին հանգամանալից քարոզում կարեւորում է ընտանիքի անդամներից յուրաքանչյուրի պարտականությունների եւ իրավունքների անթերի կատարումը։ Սրբազան հայրը համարում է, որ պարտականությունները եւ իրավունքները անթերի կատարելով միայն կարելի է գերդաստանների մեջ թագավորեցնել համերաշխություն, միություն եւ սիրով համեմված կենցաղավարություն։

«Մուրճ»-ում տպագրված «Հայ կնոջ ձայնը»[9] հոդվածի առիթով դիպուկ եւ արժեքավոր դիտարկումներ եւ դիտողություններ է անում Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը[10]։ Քննադատելով կանանց ազատության եւ ընտանեկան դերի մասին հոդվածագրի հայտնած որոշ պնդումներ՝ Կ. Տեր-Մկրտչյանն ընդհանրացնում է, թե՝ այո՛, թող կանայք ազատության եւ ներքին անկախության ձգտեն, զզվեն կեղծիքից ու հրապուրիչ լինելու համար գործ դրած բոլոր անվայել միջոցներից, աշխատել սովորեն, եւ երբ հարկ լինի՝ երբեք չքաշվեն հրապարակի վրա ազնիվ աշխատանքով ապրուստ հայթայթելուց, բայց եւ կին լինելուց չդադարեն,

---

[7] *Տե՛ս* Ս. Վարդապետ, *Ծնողաց պարտականութիւնը դէպ ի որդիքը, «Արարատ», 1881, Ե., էջ 195։*

[8] *Տե՛ս* Մակար եպս. Բարխուդարեանց, *Ընտանեկան խաղաղութեան մասին (Պարզ քարոզ), «Արարատ», 1901, Բ., էջ 68—75։*

[9] *Տե՛ս* Տիկին Հրանոյշ *(Հրանոյշ Թոփչեան), Հայ կնոջ ձայնը, «Մուրճ», Թիֆլիս, 1903, №1, էջ 77—87. №2, էջ 174—196։*

[10] *Տե՛ս* Կ. Վ. *(Կարապետ վրդ. Տէր-Մկրտչեան), Մեր մամուլը, «Արարատ», 1903, Ե., էջ 459—463։*

չերեւակայեն, թե տղամարդու նման շարժվելն ու տղամարդու գործեր կատարելն ավելի պատվաբեր բան կլիներ իրենց համար, առհասարակ չմտածեն, թե տղամարդն իր կատարած դերով ու իր կոչմամբ ավելի բարձր է կնոջից, չցանկանան տղամարդու ձեռքից խլել կարծեցյալ առանձնաշնորհությունները։ Իսկական մտքով վերցրած՝ ոչ մի կոչում մյուսից բարձր չէ, եւ յուրաքանչյուրը լավ է ու արժեքավոր իր տեղում. բայց եթե համեմատության գանք, գուցե պետք է կնոջ կոչումն ավելի բարձր համարենք տղամարդու կոչումից[11]*։*

Եղիշե ծ. վրդ. Մուրադյանը, «Մեր կեանքի ցաւերից»[12] *վերտառությամբ հրապարակման մեջ ընտանիքը համարելով հզոր եւ սուրբ ամրոց, որը մեր ազգային-կրոնական ինքնուրույն գոյության պահպանության խնդրում երբեք Եկեղեցուց պակաս նշանակություն չի ունեցել, գրում է, թե ընտանիքը փոքրիկ թագավորություն է եւ ազգային հասարակական ավելի մեծ համախմբումների կենդանի պատկերն ու հիմքն է։ Որքան հաստատուն է ընտանիքի անդամների միջեւ կապը, այնքան ուժեղ ու անդրդվելի են այդպիսի ընտանիքներից կազմված համայնքն ու ազգը։ Ընտանիքն է ամենամեծ եւ առաջին դպրոցը։ Այնուհետեւ հոդվածագիրն իր մտահոգություններն է արտահայտում ամուսնալուծությունների թվի աճի առիթով՝ եզրակացնելով, թե ամուսնացողների շուրջ քսան տոկոսն ընտանիք կազմել չի կարողանում, չի հասկանում ընտանեկան սրբությունները, եկեղեցական ամուսնությունն ընդունում է սոսկ իբրեւ միջոց՝ իր նպատակին հասնելու համար։ Հետագա շարադրանքում հեղինակը ներկայացնում է ամուսնալուծությունների կանխարգելմանը եւ դրանց թվի կրճատմանը միտված գործնական քայլեր*[13]*։*

Ընտանեկան երջանկության հիմք համարելով առողջությունը, համերաշխությունն ու սերը՝ «Արարատ»-ի անանուն հոդվածագիրը գրում է, որ ազգերի կենսունակության սաղմը թաքնված է ընտանիքի մեջ։ Ընտանիքն է այն առաջին դպրոցը, ուր սնվում-դաստիարակվում են հասարակության ապագա պիտանի անդամները։ Այնուհետեւ հոդվածագիրը հանգամանալից անդրադառնում է շատ կարեւոր մի խնդրի՝ ամուսնացողների առողջությանը եւ ուրախությամբ արձանագրում, որ Սինոդը,

---

[11] *Անդ, էջ 462։*

[12] *Տե՛ս* Ե. Ծ. Վ. Մ. (ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄՈՒՐԱԴԵԱՆ), *Մեր կեանքի ցաւերից, «Արարատ», 1904, Ե., էջ 398–402. 1904, Զ., էջ 498–506. 1904, Է.–Ը., էջ 593–603։*

[13] *Անդ, էջ 401։*

կարեւորելով այս խնդիրը, որոշում է կայացրել՝ ամուսնացող երիտասարդներից, ի թիվս այլ ապացուցաթղթերի, պահանջել նաեւ բժշկական վկայական՝ նրանց առողջության մասին[14]։ Ըստ հեղինակի՝ այդ փրկարար միջոցով մեծապես կկանխվի հիվանդոտ եւ այլասերված սերունդ արտադրելու վտանգը։

Հայ ընտանիքների հիմքերի անսասանությանն ու ամուսնալուծությունների թվի կրճատմանն էր նպատակաուղղված նաեւ Սինոդի՝ 1905 թ. դեկտեմբերի 15-ի շրջաբերականը, որով հայտնում էր, թե Ամենայն Հայոց Կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցու՝ առ 25 նոյեմբեր 1905 թ. թիվ 1480 կոնդակով հաստատվել է երանելի Ներսես Ե. Աշտարակեցու՝ 1854 թ. տված վճիռը՝ ապօրինի կենակցողների մասին։ Դրանով ապօրինի կենակցողները զրկվում էին սուրբ հաղորդությունից եւ եկեղեցական օրենքներից։ Այդպիսիների մահվան դեպքում քահանան պարտավոր էր սեւ փիլոնով լուռ ուղեկցել դագաղը տնից դեպի գերեզմանատուն՝ առանց եկեղեցի մտցնելու, իսկ գերեզմանատանը միայն «Ողորմած Աստուած»-ը երգել, ապա դիակը հողին հանձնել եւ կնքել գերեզմանը։ Եթե ապօրինի կենակցողները հետագայում՝ մինչեւ իրենց մահը, զղջացած լինեին, ապա նրանց թույլատրվում էր արժանացնել վերջին հաղորդության[15]։

Պսակի խորհրդի, ամուսնության նպատակների, մարմնական ու սեռական զարգացմանը եւ հարակից այլ հարցերի վերաբերյալ ուշագրավ դիտարկումներով աչքի է ընկնում նաեւ Սմբատ քհն. Սարգսյանի հրապարակումը[16]։ Տեր Սմբատի կարծիքով՝ ընտանիք կազմելու, ասել է թե՝ ամուսնության էական նպատակը որդեծնությունն է, իսկ սեռական հարաբերությունը եւ կենցաղային հարմարությունները միայն միջոց են սերունդ տալու եւ կրթելու համար։ Գրելով, թե քրիստոնեական Եկեղեցու հասկացողությամբ՝ ամուսնությունը տղամարդու եւ կնոջ մի բնական ընկերություն է «կեանքի շարունակութիւնը ստեղծելու, սերունդ առաջացնելու եւ

---

[14] *Տե՛ս Х., Ուշադրութեան արժանի խնդիր «Արարատ», 1904, ԺԱ., էջ 952։ Նորապսակների առողջական վիճակի մասին բժշկական վկայական (տեղեկանք) ներկայացնելու անհրաժեշտության մասին տե՛ս Մկրտիչ Ա. Վանեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի (Խրիմյան Հայրիկ) թ. 266 կոնդակը, «Արարատ», 1905, Ե., էջ 404։ Ամսագիրը ծանուցում է նաեւ, որ ժողովուրդը գոհունակությամբ է ընդունել ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելու՝ Սինոդի որոշումը, ինչի վկայությունն են մի քանի տեղերից ստացված շնորհակալական հեռագրերը։ Տե՛ս «Արարատ», 1905, Ա., էջ 19։*

[15] *Տե՛ս «Քաղուածք Սինոդի օրագրութիւններից», «Արարատ», 1905, Ա., էջ 7–8։*

[16] *Տե՛ս* Սմբատ քհն. Սարգսեան, *Ինչ է եկեղեցական ամուսնութիւնը, «Արարատ», 1909, Ա., էջ 33–43։*

սերունդ կրթելու, կեանքի բնական լուծը տանելու հաւասարազօր զոյգ», Սմբատ քահանան նշում է, որ տիրող օրենքը՝ ամուսնացողների տարիքը սահմանելու վերաբերմամբ, խիստ պակասավոր է, քանի որ դրանում որոշ է միայն ամենափոքր եւ ամենամեծ սահմանը՝ 13–15-ից մինչեւ 80 տարեկանը, բայց թե ինչ հարաբերակցություն պետք է լինի ամուսնացողների տարիքների միջեւ, այդ մասին օրենքում ոչինչ չկա։ Տեր Սմբատն առաջարկում է օրենքով սահմանել ամուսնացողների միջեւ ամենամեծ տարիքային հեռավորությունը. այն է՝ եթե տղամարդն է մեծ, մինչեւ տասնհինգ տարի, եթե կինն է մեծ, երեք տարուց ավելի չպետք է լինի[17]։

Մահասփյուռ եւ դժնդակ 1915 թ., երբ նահատակվում էր հայ ժողովրդի արեւմտահայ հատվածը, հայ ընտանիքների ամրությամբ մտահոգված Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսը առ 26 նոյեմբերի 1915 թ. թիվ 2180 կոնդակով հոգեւոր ատյաններին ու քահանաներին կարգադրում էր ամուսնությունների եւ ամուսնալուծությունների հարցերում խստորեն պահպանել եկեղեցական կարգն ու ավանդույթները[18]։ Մինչ այդ նորին սրբություն Գեւորգ Ե. Սուրենյանցը, նկատի ունենալով, որ սկսված ռուս-թուրքական պատերազմը խոչընդոտում է Արեւմտյան Հայաստանի եւ Օսմանյան կայսրության հայաբնակ շրջանների թեմական առաջնորդներից պսակվողների ամուրիության վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունների ստացմանը եւ մտահոգված լինելով նոր ընտանիքների ստեղծման ու հայ ժողովրդի բազմացման կարեւոր խնդրով՝ արեւելահայ թեմական առաջնորդներին շրջաբերական կոնդակներ է հղում եւ հրահանգում, որ գաղթական հայերին պսակի թույլտվություն տան, եթե 6–7 գրագետ անձնավորություն երդմամբ հաստատի պսակվողների ամուրիությունը[19]։

Հայադավանների ամուսնալուծական խնդիրներով Ռուսաց կառավարիչ խորհրդարանի եւ Հայոց կաթողիկոսի իրավասություններն են

---

[17] Տե՛ս անդ, էջ 36, 40։

[18] Տե՛ս Գեւորգ Ե. Սուրենյանցի սրբատառ կոնդակը. «Արարատ», 1915, ԺԱ.–ԺԲ., էջ 807–809։ Ուշագրավ է նաեւ Գեւորգ Ե. կաթողիկոսի՝ առ 24 մարտի 1917 թ. թ. 480 գրությունը՝ ուղղված Երեւանի փոխթեմական Տեր Խորեն եպս. Մուրադբեկյանին, որով Խորեն եպիսկոպոսին հանձնարարում էր բանիմաց գաղթական անձանց խորհրդակցություն հրավիրել եւ միջոցներ ձեռնարկել գաղթականների պսակալուծությունների առաջն առնելու համար, իսկ խորհրդակցության մասին զեկուցում ներկայացնել իրեն՝ Գեւորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսին։ Տե՛ս «Արարատ», 1917, Դ.–Ե., էջ 281։

[19] Տե՛ս «Արարատ», 1915, Բ. –Գ., էջ 110։

մեկնաբանված Արսեն վարդապետի հեղինակած հոդվածում[20]։ Հոդվածագիրը, հենվելով Հայոց Եկեղեցու կանոնների վրա, ցույց է տալիս այն իրավական հողը, որը պետք է լինի ամուսնալուծությունների խնդրում Հայոց կաթողիկոսների բռնելիք դիրքի կռվանը։

«Արարատ» ամսագրի էջերում միջնադարյան Հայաստանում ամուսնության կարգերի խանգարումների եւ խախտումների, մասնավորապես՝ մերձամուսնության եւ բազմակնության վերաբերյալ արժեքավոր հետազոտական հոդվածաշար է հրատարակել Ստեփան Կանայանցը[21]։

Անզավակության պատճառով հայ ընտանիքների ամուսնալուծությունների թվի կրճատմանն էր միտված Սինոդի հետեւյալ որոշումը։ Քննության առնելով Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի թեմական ատյանի առ 1917 թ. մարտի 7-ի թ. 254 հայտարարությունը՝ հայ բարեսիրտ ընտանիքների կողմից ընկեցիկ երեխաների որդեգրման մասին՝ Սինոդը որոշեց (որոշում է թ. 161՝ տրված առ 15 մայիսի 1917 թ.), որ չափաբերական մատյաններում հայ քահանաները պետք է արձանագրեն ընկեցիկ երեխայի մկրտությունն այն ամուսինների անունով, որոնք օրինական կերպով որդեգրում են երեխային[22]։

Ընտանիքի վերաբերյալ «Արարատ» ամսագրում հրատարակվել են նաեւ թարգմանական նյութեր, որոնցից է Սամուել Սմայլսի «Ընտանիքի ազդեցություն» հրապարակումը[23]։ Հեղինակը, կարեւորելով կնոջ դերն ու կրթական մակարդակը, գրում է, որ կնոջ ազդեցությունն ամեն տեղ միեւնույնն է, ամենուր նրա վիճակը մեծ ազդեցություն ունի ժողովրդի բարոյականության, սովորությունների, բնավորության վրա։ Որտեղ նվաստացած է կինը, այնտեղ նվաստացած է հասարակությունը, որտեղ կինը բարոյապես սուրբ է, անբիծ եւ զարգացած, այնտեղ բարձրանում է հասարակությունը նրա համեմատությամբ։

---

[20] Տես Արսէն վարդապետ (հավանաբար՝ Արսէն վրդ. Ղլտճեան), Հայադաւանների ամուսնալուծական խնդիրներն եւ Ռուսաց կառավարիչ սենատը (Խնդրի տեսրիքական լուծման շուրջը), «Արարատ», 1917, Դ.–Ե., էջ 341–349։

[21] Տես Ստ. Կանայեան, Ամուսնական արտակարգ երեւոյթներ, «Արարատ», 1917, Զ.–Է., էջ 517–525. Նույնի՝ Մերձամուսնութիւնը եւ բազմակնութիւնը քրիստոնեայ Հայաստանում, «Արարատ», 1917, Ը., էջ 651–669. նույնի՝ «Մերձամուսնութիւն», «Արարատ», 1917, Թ.–ԺԲ., էջ 765–789. նույնի՝ «Մերձամուսնութիւն», «Արարատ», 1918, Ա.–Գ., էջ 89–99։

[22] Տես «Սինոդի օրագրերից քաղուածներ», «Արարատ», 1917, Զ.–Է., էջ 436։

[23] Ս. Սմայլս, Ընտանիքի ազդեցութիւն (թարգմանիչ՝ Գէորգեան ճեմարանի Զ. դասարանի աշակերտ Թադէոս Պալեան), «Արարատ», 1881, Ա., էջ 25–36, Գ., էջ 127–139։

Կնոջը կրթել նշանակում է տղամարդուն կրթել, բարձրացնել կնոջ բնավորությունը, նշանակում է տղամարդու բնավորությունը բարձրացնել, ընդարձակել կնոջ մտավոր ազատությունը, նշանակում է ամբողջ հասարակության ազատությունը ընդարձակել եւ ապահովել, որովհետեւ հասարակությունները ծնվում են ընտանիքներից, ինչպես որ ազգերը՝ մայրերից[24]*։*

Ամփոփենք։ Ընտանիքի վերաբերյալ «Արարատ» ամսագրում տպագրված հոդվածներում, նյութերում եւ հրապարակումներում արծարծվել են հասարակական մեծ հնչեղություն ունեցող եւ ժամանակի հայ հասարակությանը հուզող հարցեր։ Իրենց հրապարակումներում հոդվածագիրները կարեւորել են ընտանիքի, ծնողների հասարակական դերը, ընտանեկան դաստիարակության նշանակությունը։ «Արարատ» ամսագրում ընտանիքի վերաբերյալ ներկայացված բազմաթիվ դիտարկումներ ու պնդումներ շատ արժեքավոր են եւ ուսանելի։ Այդ հրապարակումներում բարձրացված մի շարք հարցեր այժմ նույնպես արդիական են եւ չեն կորցրել իրենց հրատապությունը։

РЕЗЮМЕ

Изданный в 1868—1919 гг. журнал «Арарат» сыграл значительную роль в духовной, культурной и общественной жизни армянского народа. Издание поспособствовало развитию науки, культуры и арменоведения. Вокруг «Арарата» сплотились и корреспондировали для журнала почти все известные армянские священнослужители, деятели культуры и ученые того времени.

Опубликованные в журнале статьи, материалы и исследования, касающиеся различных отраслей науки и искусства, в том числе арменоведения и педагогики, стали неоценимым источником и важным материалом для дальнейших исследований и научных исканий.

В журнале «Арарат» были опубликованы статьи, материалы и публикации, в которых были затронуты вопросы, волнующие армянское общество того времени. В своих публикациях авторы статей отмечали важность социальной роли семьи, родителей, а также значимость семейного воспитания. Ряд вопросов,

[24] Ս. Սմբատյան, *Ընտանիքի ազդեցությունն (թարգմանիչ՝ Գէորգեան ճեմարանի Զ. դասարանի աշակերտ Թադէոս Պալեան), «Արարատ», 1881, Գ., էջ 137։*

поднятых в публикациях о семье на страницах журнала «Арарат», и сегодня не утратил своей актуальности.

SUMMARY

Published from 1868 to 1919, “Ararat” magazine played a significant role in the spiritual, cultural and social life of the Armenian people. “Ararat” magazine contributed to the development of science, culture and Armenology. Almost all famous Armenian clergymen, cultural workers and scholars of that period rallied around “Ararat” and collaborated with the magazine. It published articles, materials and researches related to various branches of science and art, including Armenology and pedagogy, which became an invaluable source and important material for further researches and scientific endeavors.

Articles, materials and publications of “Ararat” magazine touched upon issues of concern to the Armenian society of the time. The authors of the articles in their publications noted the importance of the social role of the family, parents, as well as the importance of family education. A number of issues raised in publications about the family on the pages of “Ararat” magazine are still relevant and have not lost their significance.